ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» սեպտեմբերի 2026թ. Ն ՄՈ/560-Ա

ք. Արմավիր

«ԳՐԻԲՈՅԵԴՈՎԻ Վ. ՌՈՍՏՈՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2026 թվականի սեպտեմբերի 16-ի ՄՈ/556-Ա որոշումը «Գրիբոյեդովի Վ. Ռոստոմյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում գույքի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահին (Ա. Հակոբյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել «Գրիբոյեդովի Վ. Ռոստոմյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Թամարա Գևորգյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովի նախագահին (Ա. Հակոբյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և

արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ (Ա. Հակոբյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզպետի

2026 թվականի հունվարի 24-ի

N ՄՈՒ/560 -Ա որոշման

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ա.Հակոբյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի Ֆինանսական վարչության պետ

Անդամներ՝

Ս.Սաֆարյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի Ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ

Հանձնող՝

Ս. Շահինյան — «Գրիբոյեդովի Վ. Ռոստոմյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն և վարչատնտեսական մասի համակարգողի պարտականություններ կատարող

Ընդունող՝

Թ. Գրիգորյան — «Գրիբոյեդովի Վ. Ռոստոմյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող

Восстановимая подпись

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ